Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
հոկտեմբերի 15-ի N 1490-Ն որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՎԱԾ ԵՎ «ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն կարգով կարգավորվում են էլեկտրոնային առևտրի օպերատորների (այսուհետ՝ օպերատորներ) կողմից Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե)՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 429.5-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ և 8-րդ ենթակետերին համապատասխան՝ ժամանակավոր պահպանության հանձնված և «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված էլեկտրոնային առևտրի ապրանքների առանձնացված հաշվառման վերաբերյալ հաշվետվությունների (այսուհետ՝ հաշվետվություն) ներկայացման հետ կապված հարաբերությունները:

2. Հաշվետվությունները օպերատորների կողմից կոմիտե են ներկայացվում կոմիտեի կողմից կիրառվող՝ մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով, իսկ մինչև նշված էլեկտրոնային համակարգի գործարկումը՝ էլեկտրոնային փոստով կամ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ պայմանավորված էլեկտրոնային եղանակով ներկայացման անհնարինության դեպքում՝ թղթային եղանակով:

3. Անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքների վերացումից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում օպերատորները թղթային եղանակով ներկայացված հաշվետվությունների էլեկտրոնային օրինակները ներկայացնում են կոմիտե:

4. Հաշվետվությունները օպերատորների կողմից ներկայացվում են կիսամյակային կտրվածքով՝ մինչև յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

5. Հաշվետվությունները գրանցվում են կոմիտեի կողմից՝ ստանալով գրանցման համար, որը բաղկացած է հաշվետվության ներկայացման ամսաթվից, հերթական համարից (տարեկան կտրվածքով), էլեկտրոնային առևտրի օպերատորի՝ համապատասխան ռեեստրում հաշվառման վկայականի համարից:

6. Կոմիտեի կողմից հաշվետվության մեջ սխալների հայտնաբերման դեպքում սույն կարգի 2-րդ կետով սահմանված եղանակով՝ օպերատորին է ուղարկվում ծանուցում՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում ճշգրտված հաշվետվության ներկայացման վերաբերյալ:

7. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված ծանուցումը ստանալուց հետո, նույն կետով սահմանված ժամկետում, օպերատորի կողմից կոմիտե է ներկայացվում ճշգրտված հաշվետվությունը:

8. Հաշվետվությունների մեջ սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում օպերատորները կարող են ներկայացնել ճշգրտված հաշվետվություն, եթե սույն կարգի 6-րդ կետին համապատասխան կոմիտեի կողմից տվյալ տեղեկության ճշգրտման առնչությամբ ծանուցում չի ուղարկվել:

9. Ճշգրտված հաշվետվությունը ներկայացնելիս օպերատորները լրացնում են ներկայացված հաշվետվության միայն այն բաժինները, որոնք ճշգրտվում են:

10. Հաշվետվությունները սահմանված ժամկետներում չներկայացնելը կամ թերի ներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

11. Անկախ սույն կարգի 4-րդ կետով սահմանված պարբերականությունից, հաշվետվությունները օպերատորների կողմից ենթակա են կոմիտե ներկայացման՝ կոմիտեի կողմից համապատասխան հարցման առկայության դեպքում, եթե մաքսային մարմնի կողմից առկա է մաքսային հսկողության իրականացման անհրաժեշտություն:

12. Սույն կարգի 11-րդ կետով նախատեսված հարցումը օպերատորներին է ուղղվում մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով, իսկ մինչև նշված էլեկտրոնային համակարգի գործարկումը՝ էլեկտրոնային փոստով կամ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ պայմանավորված էլեկտրոնային եղանակով ներկայացման անհնարինության դեպքում՝ թղթային եղանակով:

13. Սույն կարգի 11-րդ կետով նախատեսված հարցման մեջ նշվում են մաքսային հսկողության իրականացման իրավական հիմքը, մաքսային հսկողության իրականացման անհրաժեշտության հիմնավորումը և այն ժամանակահատվածը, որի համար հաշվետվությունը ենթակա է ներկայացման:

14. Օպերատորները կոմիտեի հարցման հիման վրա սույն կարգի 11-րդ կետով սահմանված հաշվետվությունները ներկայացնում են մինչև հարցումը ստանալու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ՄԱԿՈՒՆՑ

15.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ